




ԵՎՐԱՍԻԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ 2014-2018 թթ



Բովանդակություն

ՄԵՐ ՄԱՍԻՆ.....	4
ԵՄՆ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ	5
ԳԼՈՒԽ1. ԵՄՆ 2014-2018 թթ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ	10
ԳԼՈՒԽ2. ԵՄՆ 2014-2018 թթ. «ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ»	21

Փաստ. անվանումը	Եվրասիա միջազգային համալսարանի 2014-2018 Ռազմավարական ծրագիր և գործողությունների ծրագիր
Հաստատման ամսաթիվը	20/10/2014 Արձանագրության N 6
Վերանայման հաստատումը	25/03/2016 Արձանագրության N 8
Հաստատող մարմինը	Կառավարման խորհուրդ
Նախագահ	Սամվել Պիպոյան
Ստորագրություն	
Մշակող	Որակի ապահովման կենտրոն
Ներդրման/իրականացման պատասխանատու	Կադրերի բաժին

Եվրասիա միջազգային համալսարանը հիմնադրվել է 1996 թ.-ին՝ սկզբնական շրջանում իբրև «Մխիթար Գոշ» համալսարան: 2002 թ.-ի մարտին, ՀՀ կրթության և գիտության նախարարության որոշմամբ, ստացել է պետական հավատարմագիր և համալսարանին տրվել է պետական նմուշի դիպլոմ շնորհելու լիազորություն: 2004 թ.-ից համալսարանը վերանվանվել է Եվրասիա միջազգային համալսարանի և որդեգրել է միջազգային համալսարանի իր ռազմավարական ուղին:

Այսպես, 2005 թ. համալսարանը անցում է կատարել ուսուցման կրեդիտային համակարգի և նախաձեռնել է ուսանողների և աշխատակազմի փոխանակման մի շարք ծրագրեր: Արդեն շուրջ տասը տարի է, ինչ բուհը, հավատարիմ մնալով միջազգայնացման իր ռազմավարությանը, ակտիվորեն համագործակցում է միջազգային կառույցների հետ, անդամակցում միջազգային դրամաշնորհային ծրագրերին և դրանց շրջանակներում իրականացնում միջազգային ծրագրեր տարբեր մակարդակներում՝ ուսանողների փոխանակում, դասախոսների և վարչական աշխատողների վերապատրաստում: Վերջին տարիներին բուհը նախաձեռնել է նաև միջազգային կրթական ծրագրերի ներդրման գործընթաց:


2004-2005 թվականներին բուհը նաև ներդրել է մագիստրոսական ծրագրեր, տեղափոխվել է նոր մասնաշենք, իսկ 2013 թ.-ից համալսարանում գործում է ասպիրանտուրա:

ԵՄՆ Տեսլականը

Տարածաշրջանում լինել ճկուն կառավարում ունեցող առաջատար կրթական հաստատություն՝ միտված աշխատանքային շուկայի անընդհատ զարգացող պահանջներին համապատասխան գործնական հմտություններով ու կարողություններով, տեսական և կիրառական գիտելիքներով օժտված բարձրագույն կրթությամբ մասնագետների պատրաստմանը:

ԵՄՆ Առաքելությունը

Համալսարանն իր առաքելությունը նախանշում է երեք մակարդակներում՝ ուսուցում, հետազոտություն և հանրային ծառայություն՝ առաջնային դերակատարություն տալով արդյունավետ ուսուցման և ուսումնառության կազմակերպմանը:



Ուսուցում

- Ուսուցանել որակի ապահովման ազգային և եվրոպական չափանիշներին համապատասխան:
- Իրականացնել բարձրագույն մասնագիտական և հետբուհական կրթություն սոցիալական, հումանիտար գիտությունների և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում՝ նպատակաուղղված աշխատաշուկայի պահանջներին և կարիքներին:
- Ապահովել կայուն միջազգային համագործակցություն՝ տեղայնացնելով լավագույն փորձը ուսուցման և որակի ապահովման ոլորտներում, միջազգայնացնելով կրթական բովանդակությունը:

- Ստեղծել համագործակցային միջավայր կրթության շահառուների համար՝ նպաստելով արդիական գիտելիքների, հմտությունների և կարողությունների փոխանցմանն ու տարածմանը:
- Համագործակցային մեթոդների միջոցով ուսանողների մոտ զարգացնել սովորելու հմտություններ, ինչպես նաև պատրաստակամություն ընդունելու նորը և անընդհատ կատարելագործվելու, նպաստելով հարափոփոխ միջավայրում վերջիններիս մրցունակության ապահովմանը:

Հետազոտություն

- Իրականացնել հետազոտություններ՝ ուղղված կրթության բովանդակության արդիականացմանը, միջազգայնացմանը, ինչպես նաև համալսարանի անընդհատ զարգացմանը:
- Իրականացնել ՀՀ սոցիալ-տնտեսական առաջընթացին և միջազգայնացմանը միտված կիրառական հետազոտություններ:

Հանրային ծառայություն

- Ուսուցման և հետազոտության ոլորտներում ստացված արդյունքներին հաղորդակից դարձնել հասարակական լայն շրջանակների՝ տարածելով ձեռք բերված դրական փորձն ու գիտելիքը:
- Խորացնել համայնքային հաստատությունների հետ համագործակցությունը՝ ուսանողների պրակտիկաների և ավարտական աշխատանքների հետազոտական բնույթի թեմաներում ընգրկել նաև համայնքային նշանակության սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրներ

ԵՄՆ Արժեքները

Եվրասիա միջազգային համալսարանը կրթական համայնք է, որտեղ գնահատվում է ստեղծագործական մտածողությունը, նորարարությունն ու նախաձեռնողականությունը: Թիմային ուղղորդված աշխատանքի միջոցով բուհը մինչ օրս կարողացել է դիմակայել կրթական և տնտեսական ոլորտում առաջացած մարտահրավերներին՝ երբեմն դրանք ընդունելով սիրով և համարելով անընդհատ աճի երաշխիք:


Մենք նախընտրում ենք առաջնորդության և գերազանցության ճանապարհը՝ սերմանելով, զարգացնելով բուհի հիմնարար արժեքները ներքին շահակիցների շրջանակներում: Ապրելով հարափոփոխ դարաշրջանում՝ մենք գիտակցում ենք, որ անընդհատ աճն ու կատարելագործումը և, ընդհանրապես, հարատև կրթությունը դարի պահանջն է: Փոքրաթիվ լսարանները և ուսանող-դասախոս թվի ցածր հարաբերակցությունը, բուհում հնարավորություն է ստեղծում համագործակցային մեթոդների կիրառման միջոցով անհատապես ճանաչել ուսանողներին՝ զարգացնելով ուսանողների թիմային աշխատանքի հմտությունները, ապահովելով առաջնորդության հնարավորություններ, զարգացնելով ստեղծագործական, վերլուծական մտածողություն: Այսպիսով, ԵՄՆ արժեքներն են.



ԵՄՆ կազմակերպական կառուցվածքը



ԵՄՀ-ի գործառույթների /հիմնական և աջակից/ շղթան, խորհրդատվական մարմինները



Հիմք ընդունելով ԵՄՀ արտաքին և ներքին միջավայրների վերլուծության արդյունքները, ԵՄՀ-ն իր առջև սահմանում է 2014-2018 թթ-երի **ռազմավարական նպատակները**: Դրանք են՝

1. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ,
2. ԳԻՏԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ, ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ,
3. ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ,
4. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՆՊԱՏԱՎՈՐ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ,
5. ՈՐԱԿԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՐԱԾՄԱՆ ՆՊԱՏԱՎՈՐ ՄԻԶԱՎԱՅՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ:

Վերոգրյալ նպատակներին հասնելու համար ԵՀՄ-ը սահմանում է ռազմավարական խնդիրներ, մշակում է դրանց լուծման համար անհրաժեշտ միջոցառումներ և ապահովում է անհրաժեշտ ռեսուրսներով:

Ռազմավարական խնդիրները դրանք ռազմավարական նպատակների իրականացմանն ուղղված խնդիրներն են, որոնց լուծումը պետք է ապահովի նպատակի իրականացումը:

Իրականացման միջոցները դրանք իրականացման ուղիներն են՝ սահմանված ռազմավարական խնդիրները լուծելու համար:

ՆՊԱՏԱԿ 1. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Վերջին տարիների աշխարհաքաղաքական գլոբալացման միտումները հետևանք են տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման, փակ սահմանների վերացման, միասնական համաշխարհային տնտեսական շուկայի ստեղծման: Այս ամենը հանգեցրել է մասնագիտական կրթության նկատմամբ պահանջարկի ավելացմանը, կրթական ծրագրերի բովանդակային պահանջների փոփոխմանը, կրթական գլոբալ տեղաշարժերի: 1998 թ.-ից մեկնարկեց Եվրոպական կրթական միասնական տարածքի ստեղծման (Բոլոնիայի) գործընթացը, որին Հայաստանը միացավ 2005 թ.-ից: Այս երևույթը, իր հերթին, պահանջեց ոլորտը

կարգավորող պետական մարմիններին վերանայել իրենց ազգային կրթության նկատմամբ կրթական ու մասնագիտական պահանջներն ու չափորոշիչները: Մեր երկրում այդ գործընթացների տրամաբանությանը համապատասխան ՀՀ Կառավարությունը մեկնարկեց բարձրագույն կրթական համակարգի բարեփոխումները: Կրթության քաղաքականության մշակողներն ու իրականացնողները, ուսումնասիրելով և վեր հանելով մասնագիտական կրթական համակարգի կարիքները, նախաձեռնեցին որակի ապահովման ազգային շրջանակի (ՈԱՇ) ձևավորման և ներդրման գործընթացը՝ բխեցնելով այն որակի ապահովման եվրոպական շրջանակից (ՈԵՇ):

Խնդիր 1.1. Ներդնել իրականացվող կրթական ծրագրերի արդիականացման, բարելավման, գնահատման, ինչպես նաև բուհի կողմից նոր կրթական ծրագրերի իրականացման մեխանիզմներ:

Իրականացման միջոցները.

- Կատարել իրականացվող կրթական ծրագրերի ամենամյա վերլուծություններ:
- Վերլուծության արդյունքերի հիման վրա, անհրաժեշտության դեպքում, նախաձեռնել կրթական ծրագրերի բովանդակային և կառուցվածքային վերանայում, կրեդիտային համակարգի բարելավում, ինչպես նաև նոր կրթական ծրագրերի ներդրում:

Խնդիր 1.2. Ներդնել ուսումնառության որակի շարունակական բարելավման մեխանիզմներ՝ նպաստելով ԵՄՀ պրոֆեսորադասախոսական կազմի և ասպիրանտների մասնագիտական և մեթոդական որակավորումների բարձրացմանը:

Իրականացման միջոցները.

- Իրականացնել ԵՄՀ մասնագիտական, ընդհանրական և մեթոդական վերապատրաստումներ՝ ուղղված դասախոսների մասնագիտական որակավորման բարձրացմանը՝ տարբերակված գնահատման և վճարման համակարգի կիրառմամբ:
- Նպատել ուսումնառության ընթացքում պրակտիկ գործունեության ավելացմանը:
- Վերապատրաստումներին ներգրավել ԵՄՀ ասպիրանտներին՝ խրախուսելով նրանց համալրումը ԵՄՀ պրոֆեսորադասախոսական կազմին:

Խնդիր 1.3. Ուսուցման որակի ապահովման և գնահատման ներքին համակարգի ստեղծում:

- Մշակել ուսուցման որակի ապահովման և գնահատման ներքին քաղաքականություն:
- Իրականացնել ուսուցման որակի ապահովման և գնահատման մոնիտորինգ:

ՆՊՍՏԱԿ 2. ԳԻՏԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՅՈՒՄ, ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Ժամանակակից աշխարհը անցում է կատարում զարգացման պոստինդուստրիալ քաղաքակրթական տարածք, որտեղ մրցունակության բարձրացման հիմքը գիտելիքի և նորարարությունների վրա հիմնված տնտեսության ձևավորումն է: Այդպիսի տնտեսական մոդելի հիմքում ընկած են ժամակակակից ինովացիոն համակարգերը, որում մեծ դերակատարում ունեն նաև ակադեմիական հաստատությունները: Վերջիններս մասնագիտական դասական կրթություն ապահովելուց և հասարակության մեջ արտաքին դրականազդեցություն ձևավորելուց գատ ստանձնում են նաև նոր գիտելիքներ ստեղծողի և դրանք առևտրայնացնողի դերակատարումներ: Բուհերի կողմից այդպիսի նիշաների ապահովումը մի կողմից հանգեցնում է երկրի գիտահետազոտական մտքի զարգացմանը, մյուս կողմից բարձրացնում է երկրի ինովատիվ հենքը, նպաստում է նորարար ստարտ-ափերի ստեղծմանը, տարածմանը՝ հանգեցնելով տնտեսական ակտիվության զարգացմանը:

ԵՄՀ-ի համար խիստ կանոթ է Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված ակտիվ դերակատարության ստանձնումը և այդ ուղղությամբ կոնկրետ միջոցառումների իրականացումը: Մեր համոզմամբ, գիտական միտքը և նորարարությունները պետք է լինեն մեր երկրի կայուն տնտեսական աճի և զարգացման հիմնասյունները: ԵՄՀ-ն, ինովատիվությունը իբրև սեփական արժեք ընդունելով, նաև առաջնորդվում է ինովատիվ կառավարման և մշակույթի ներդրմանն ուղղված մոտեցումներով: Որպես ռազմավարական նպատակ նախանշելով «Գիտական մտքի կայուն զարգացումը, հետազոտական աշխատանքները և նորարարությունները»՝ ԵՄՀ-ն խնդիրը դիտարկել է հետևյալ տրամաբանությամբ: Ներկա փուլում ԵՄՀ-ն իր ջանքերը պետք է ներդնի հետազոտական մշակույթի ներդրմանն ու տարածմանը բուհում, քանի որ նրա գործունեությունն ուղղված է մի կողմից բուհի կառավարման արդյունավետության բարձրացմանը, մյուս կողմից դասախոսների հետազոտական հմտությունների

զարգացմանը, նրանց կողմից հետազոտությունների իրականացման խրախուսմանը և արդյունքների ներդրմանը ուսումնական գործընթացում: Դա կնպաստի դասավանդման որակի բարձրացմանը, մինչդիսցիպլինար և այլ հետազոտությունների արդյունքում նոր դասընթացների ներդրմանը, գիտական աստիճան ունեցող դասախոսների տեսակարար կշռի ավելացմանը, արդյունքում՝ բուհի հեղինակության բարձրացմանը: Մյուս կողմից, դասախոսների մոտ հետազոտական հմտությունների զարգացումն ապագայում կարող է ապահովել բարձր մակարդակի հետազոտությունների իրականացում, այդ ուղղությամբ լրացուցիչ ֆինանսական ռեսուրսների հայթայթում, բուհի ֆինանսական մուտքերի դիվերսիֆիկացում, գիտահետազոտական մշակույթի հզորացում:

Առաջիկայում ԵՄՀ գիտական հետազոտությունների զարգացումը կարող է հանգեցնել «ԵՄՀ - արտաքին շահակիցներ» հարթություններում նոր որակների տարածմանը: Այսպես, ԵՄՀ գիտահետազոտական աշխատանքները տարբեր խողովակներով կարող են ուղղվել գիտական հանրության, պետական քաղաքականություն մշակողներին, ինչպես նաև իրական հատվածի այլ շահակիցներին: Մյուս կողմից, այդ պրոդուկտները կարտացույցեն ԵՄՀ կրթական միջավայրում օրինակ տեղ գտնելով առարկայական ծրագրերում:

Ելնելով այդ հանգամանքից, հետազոտությունների և նորարարությունների դերի բարձրացումը ԵՄՀ-ն 2014-201 տարիների ընթացքում իրականացնելու է հետևյալ խնդիրների լուծման միջոցով:

Խնդիր 2.1. Նպաստել ԵՄՀ հետազոտական աշխատանքների քանակի ավելացմանը և պրոֆեսորադասախոսական կազմի ակտիվ ներգրավվածությանը այդ ծրագրերում

Իրականացման միջոցները.

- Վերանայել համալսարանի հետազոտական ոլորտի զարգացման ուղղությունները՝ ակտիվացնելով կիրառական բնույթի հետազոտությունները:
- Մշակել և իրականացնել հետազոտական ծրագրերի կատարման արդյունավետության գնահատում՝ ղեկավարվելով գիտական հրատարակումներով, դրանց վրակատարված հղումներով և այլ ցուցանիշներով:
- Խրախուսել ԵՄՀ պրոֆեսորադասախոսական կազմի հետազոտական գործունեության ակտիվացումը՝ դրամաշնորհների տրամադրման միջոցով: Հետևողականորեն բարձրացնել ԵՄՀ միջազգային կապերի և հետազոտությունների կենտրոնի

կողմից կազմակերպվող գիտաժողովերի ճանաչելիությունը՝ նպաստելով թե՛ տեղական, թե՛ օտարերկրյա մասնակիցների թվաքանակի ավելացման:

Խնդիր 2.2. Նպաստել հետազոտական և նորարարական նախաձեռնություններում ԵՄՀ ուսանողների ներգրավվածության մեծացմանը:

- Ապահովել ուսանողների և ասպիրանտների, ինչպես նաև դասախոսների հետ համատեղ մասնակցությունը հետազոտական նախագծերում՝ դրամաշնորհների, կրթաթոշակների տրամադրման միջոցով:
- Խրախուսել ուսանողների մասնակցությունը համալսարանական, հանրապետական և միջազգային գիտաժողովներում
- Բակալավրիատի և մագիստրատուրայի ուսումնական ծրագրերում ավելացնել հետազոտական բաղադրիչը
- Մշակել և իրականացնել ուսանողների մոտ ձևավորված հետազոտական կուլտուրայի գնահատման մեխանիզմները

Խնդիր 2.3. Նպաստել Համալսարանի մասնակցությամբ համատեղ հետազոտական ծրագրերի իրականացմանը

- Ներգրավել արտաքին շահակիցներին ավարտական աշխատանքների, մագիստրոսական և ասպիրանտական ատենախոսությունների թեմաների ընտրության և հետազոտությունների ղեկավարման համար:
- Աջակցել գիտական կենտրոնների և այլ բուհերի հետ համատեղ հետազոտական ծրագրերի իրականացմանը
- Աջակցել գործատուների հետ համատեղ հետազոտական ծրագրերի իրականացմանը և ներդրմանը կրթական ծրագրերում

- **Խնդիր 2.4. Ընդլայնել հետազոտական բաղադրիչը միջազգային համագործակցության մեջ** Ապահովել պրոֆեսորադասախոսական կազմի, ասպիրանտների և մագիստրանտների մասնակցությունը հետազոտական բաղադրիչ ունեցող փոխանակման ծրագրերում
- Խրախուսել պրոֆեսորադասախոսական կազմի և ասպիրանտների միջազգային համատեղ հետազոտական ծրագրերի իրականացում օտարերկրյա համագործակից բուհերի և կազմակերպությունների հետ
- Խրախուսել պրոֆեսորադասախոսական կազմի և ասպիրանտների հետազոտությունների տպագրումը միջազգային գրախոսվող մասնագիտական ամսագրերում

- Կազմակերպել միջազգային կոնֆերանսներ, խրախուսել պրոֆեսորադասախոսական կազմի և ասպիրանտների մասնակցությունը միջազգային կոնֆերանսներին և այլ հետազոտական այլ ծրագրերին

ՆՊԱՏԱԿ 3. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՄ

Այսօր աշխարհում տեղի ունեցող քաղաքակրթական տրանսֆորմացիոն գործընթացները մշտապես հանգեցնում են սոցիալական, տնտեսական և մշակութային ինտեգրացիաների: Արդյունքում, որևէ երկիր չի կարող մեկուսացած զարգանալ, քանի որ գլոբալ մրցունակությունը բարձրացնելու լավագույն այցեքարտը բաց տնտեսություննունենալն է՝ համաշխարհային տնտեսությունից մշտապես վերցնելու և այնտեղ ներդրում ունենալու միջոցով: Գլոբալ սոցիալ-տնտեսական և մշակութային համակարգերին ինտեգրման գործընթացներում էկոհամակարգի տարբեր շահակիցներ տարբեր նիշաներ են զբաղեցնում: Սակայն, երկարաժամկետ և կայուն արդյունք ապահովելու տեսանկյունից այդ համակարում կարևոր դերակատարություն կարող են ունենալ ակադեմիական հաստատությունները: Վերջիններս իրենց գործունեության ընթացքում կարող են ավելի ու ավելի հանգեցնել գիտելիքի և տեղեկատվության շրջապատյոթի և, ըստ այդմ, սոցիալ-տնտեսական և մշակութային համակարգերի ինտեգրումների:

Մյուս կողմից, արտաքին միջավայրի վերլուծությունը մատնանշել է Հայաստանում առկա և խորացող ժողովրդագրական հիմնախնդիրները, որի հետևանքով վերջին տարիներին տարեցտարի նվազում է պոտենցիալ ուսանողների թվաքանակը երկրում: Դա նշանակում է, որ հայաստանյան ակադեմիական հաստատությունների կողմից ինտեգրման հնարավորությունների լայն կիրառումը ինչ-որ առումով անհրաժեշտություն է նաև բուհական համակարգում ֆինանսական անկախության պահպանման տեսանկյունից:

Ելնելով այդ փաստարկներից, ինչպես նաև ԵՄՀ-ի արժեքներից և առաքելությունից, միջազգայանցումը ԵՄՀ-ի համար առաջիկա տարիներին պետք է դառնա ռազմավարական նպատակ: Արդյունքում, Հայաստանի սոցիալ-տնտեսական և մշակութային ինտեգրման գործընթացում, ԵՄՀ-ն նպատակ ունի դառնալ առավել ակտիվ մասնակից: Իր գործունեությամբ ԵՄՀ-ն նպաստելու է Հայաստանի կրթական, գիտական, սոցիալական և տնտեսական տարածքների մերձեցմանը Եվրասիա աշխարհամասի բոլոր ուղղությունների հետ (Եվրոպա, Ասիա, Ռուսաստան): 2014-

2019 թթ. ԵՄՀ-ն միջազգայնացման իր ռազմավարությունը կառուցելու է հետևյալ խնդիրների լուծման միջոցով:

Խնդիր 3.1. Խթանել ԵՄՀ միջազգային կրթական, գիտական և այլ համագործակցային ծրագրերի ավելացմանը:

- Նպաստել ԵՄՀ ճանաչելիության բարձրացմանն արտերկրում՝ ընդլայնելով գործընկերների թվաքանակը, նրանց հետ համագործակցության հնարավորությունները՝ հնարավորություն ստեղծելով ԵՄՀ ինտեգրմանը միջազգային գիտահետազոտական, կրթական տարածքներին:
- Ավելացնել ԵՄՀ-ի և օտարերկրյա համալսարանների հետ համատեղ իրականացվող կրթական ծրագրերի թվաքանակը:

Խնդիր 3.2. Ընդլայնել ԵՄՀ ուսանողների, պրոֆեսորադասախոսական անձնակազմի, ասպիրանտների և վարչական աշխատակիցների շարժունակության հնարավորությունները դեպի օտարերկրյա գործընկեր բուհեր և այլ շահակից կազմակերպություններ և հակառակը:

Իրականացման միջոցները.

- Նպաստել ԵՄՀ միջազգային դրամաշնորհային ծրագրերի ավելացմանը՝ հիմքեր ապահովելով ԵՄՀ պրոֆեսորադասախոսական կազմի, ասպիրանտների, ուսանողների շարժունակության ավելացմանը՝ կրթական, հետազոտական և այլ նպատակներով:
- ԵՄՀ պրոֆեսորադասախոսական կազմի, ասպիրանտների և ուսանողների համար իրականացնել օտար լեզուների իմացության բարձրացմանն ուղղված վերապատրաստումներ՝ միջազգային համագործակցային ծրագրերում ներգրավվածության ընդլայնման նպատակով:

ՆՊԱՏԱԿ 4. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՆՊԱՏՏԱՎՈՐ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ:

Կրթության որակի շարունակական բարձրացումը պահանջում է առաջադրված խնդիրների իրականացման համար անհրաժեշտ միջավայրի ապահովում: Վերջինս ապահովվելու համար անհրաժեշտ է ապահովել կայուն և որակյալ ենթակա-

ռուցվածքներ, ինչպես նաև դրանց ապահովման համար ռեսուրսներ: Դրա համար ուսումնասիրության համար նպաստավոր ենթակառուցվածքների ապահովումը պահանջում է ֆինանսական համակարգի արդյունավետ կառավարման մեխանիզմների ապահովում:

Մյուս կողմից, արտաքին միջավայրում առկա մարտահրավերները (ՀՀ ժողովրդագրական վիճակի վատթարացում, բուհերի ընդունելության պետական միասնական քաղաքականությունը, հասարակական մտածողություն, արտագաղթ և այլն) և ներքին միջավայրի վերլուծությունը (առկա ուսուցման համակարգում ընդգրկվող ուսանողների տարեցտարի նագոյ թվաքանակ) վկայում են, որ առաջիկա տարիներին կարող են շարունակական լինել ընդունելության սահմանափակ հնարավորությունները: Ուստի, ֆինանսական անկախության տեսանկյունից խիստ նպատակահարմար է ապահովել մի կողմից դիմորդների կայուն հոսքի հենք, մյուս կողմից ֆինանսական մուտքերի այլընտրանքային աղբյուրներ:

Ելնելով դրանից, ԵՄՀ-ն իր առջև դրել է հետևյալ խնդիրները:

Խնդիր 4.1. Նպաստել ԵՄՀ ֆինանսական անկախության բարձրացմանը՝ դեպի ԵՄՀ հոսող ֆինանսական մուտքերի կայունության և դիվերսիֆիկացիայի միջոցով:

Իրականացման միջոցները.

- Ապահովել ԵՄՀ ընդունվողների կայուն հենք՝ գործընկերկազմակերպությունների հետ համագործակցության խորացման միջոցով:
- Նպաստել դեպի ԵՄՀ օտարերկրյա ուսանողներին հոսքի:
- Նպաստել ԵՄՀ գիտահետազոտական և այլնախագծերի իրականացմանը և դրան ցմիջոցով ԵՄՀ ֆինանսական մուտքերի դիվերսիֆիկացմանը:

Խնդիր 4.2. Նպաստել ԵՄՀ ֆինանսական կառավարման արդյունավետության բարձրացմանը՝ ԵՄՀ ռազմավարական նպատակներին համապատասխան:

Իրականացման միջոցները.

- Իրականացնել ԵՄՀ միջին ժամկետ և տարեկան բյուջետավորում, դրա իրականացման մշտադիտարկում՝ ֆինանսական մուտքերի դիվերսիֆիկացման սկզբունքով և ԵՄՀ ռազմավարությանը համապատասխան:
- Բարձրացնել ԵՄՀ ֆինանսական թափանցիկությունը:

Խնդիր 4.1.Նպաստել ԵՄՀ ռազմավարական նպատակների իրականացմանն ուղղված ենթակառուցվածքների ապահովմանը և դրանց օգտագործման արդյունավետության բարձրացմանը:

Իրականացման միջոցները.

- Համալրել ԵՄՀ գրադարանային ռեսուրսները:
- Բարելավել ԵՄՀ լսարանային կահավորումը, ինչպես նաև ԵՄՀ ուսումնաս-
ժանդակ ենթակառուցվածքները (բուֆետ, համակարգչային լսարան, սան
հանգույցներ և այլն):
- Բարելավել ԵՄՀ ջեռուցման համակարգը:

ՆՊԱՏԱԿ 5. ՈՐԱԿԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՐԱԾՄԱՆԸ ՆՊԱՏՈՂ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ

Որակի մշակույթի ներդրումը դիտարկել ենք երկու՝ ներքին և արտաքին համա-
կարգերում: Որակի մշակույթի ներքին համակարգը ենթադրում է կառավարման
ներքին արդյունավետ մեխանիզմների ներդրում: Արտաքին համակարգը ենթադրում
է թափանցիկության բարձրացում և արտաքին շահակիցների հետ բուհի գործու-
նեության հետադարձ կապի ապահովում:

ա/ Որակի ապահովումը ներքին միջավայրում:

Խնդիր 5.1. Ներդնել որակի մշակույթի տարածմանը նպաստող կառավարման արդյունավետ մեխանիզմներ:

Իրականացման միջոցները.

- ԵՄՀ ռազմավարական ծրագրի հիման վրա կազմել միջինժամկետ և տարեկան
գործողությունների ծրագրեր և ներդնել դրանց մշտադիտարկման մեխա-
նիզմներ:
- Ներդնել ներքին գործընթացների իրականացման էլեկտրոնային համակարգ:

բ/ Որակի ապահովման արտաքին համակարգում «Որակյալ մշակույթի տարա-
ծումը» ԵՄՀ-ն կիրականացնի արտաքին շահակիցների հետ կայուն հետադարձ
կապի ապահովմամբ:

Խնդիր 5.2. Բարձրացնել ԵՄՀ գործունեության թափանցիկությունը՝ ներդնելով բուհի կողմից շնորհվող որակավորումների, գիտահետազոտական աշխատանքների և

մշակումների, մատուցվող ծառայությունների վերաբերյալ հաշվետվողականության մեխանիզմներ:

Իրականացման միջոցները.

- Բարձրացնել համալսարանի կողմից շնորհվող որակավորումների թափանցիկությունը:
- Բարձրացնել ԵՄՀ ընդունված ուսանողների՝ ուսումնական գործընթացի վերաբերյալ տեղեկատվության մակարդակը:
- Բարձրացնել ԵՄՀ հետազոտական կենտրոնի կողմից իրականացվող գիտաժողովների արդյունքների հասանելիությունը արտաքին և ներքին շահակիցների շրջանում:
- Բարձրացնել ԵՄՀ կառավարման թափանցիկությունը՝ ընդլայնելով արտաքին շահակիցների շրջանակը:

Խնդիր 5.3. Նպաստել ԵՄՀ հասարակական պատասխանատվությունն իրացնող մեխանիզմների արդյունավետության բարձրացմանը:

Իրականացման ուղիները.

- Մշտապես իրականացնել մասնագիտական կողմնորոշման միջոցառումներդպրոցներում:
- Իրականացնել մասնագիտական և մեթոդական վերապատրաստումներ և խորհրդատվություններ թե՛ արտաքին, թե՛ ներքին շահակիցների համար:
- Բարձրացնել ԵՄՀ հետազոտական կենտրոնի գործունեության միջոցով մատուցվող հասարակական ծառայությունների աստիճանը:
- ԵՄՀ մշակույթ դարձնել և ուսանողների, դասախոսների, վարչական աշխատողների հետ համատեղ պարբերաբար իրականացնել կամավորական աշխատանքներ, բարեգործական նախաձեռնություններ և այլն:

Եզրափակիչ դրույթներ.

- *ԵՄՀ նազմավարական ծրագիրը ԵՄՀ առաքելությունը, երկարաժամկետ նպատակները և դրանց իրականացման ուղիները նախանշող հիմնական փաստաթուղթն է:*

- *ԵՄՀ ռազմավարական ծրագիրը հիմնված է ԵՄՀ արտաքին և ներքին միջավայրերի վերլուծության և ուղղված է ԵՄՀ տեսլականի և առաքելության իրականացմանը:*
- *ԵՄՀ ռազմավարական պլանին կից մշակվում է ԵՄՀ գործողությունների ծրագիրը, ԵՄՀ կառուցվածքը, իսկ դրա հիման վրա ըստ ԵՄՀ ստորաբաժանումների ձևավորվում են ԵՄՀ տարեկան գործողությունների պլաններ և տարեկան բյուջե:*
- *Օրենսդրության, կրթության գերակայությունների և այլ փոփոխություններով պայմանավորված կարող են վերանայվել ԵՄՀ առաքելությունը, ռազմավարական ծրագիրը:*

ԳԼՈՒԽ2. ԵՄՀ 2014-2018 թթ. «ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ»

ԵՄՀ 2014-2018 թթ. զարգացման ուղղություններն ամփոփված են ԵՄՀ 2014-2018 թթ. Ռազմավարական ծրագրում: Սույն փաստաթուղթը մշակվել է այդ ծրագրին կից: Այն մատնանշում է այն հիմնական գործողությունները, որոնք կիրականացվեն 2014-2018 թթ.-երի ընթացքում ԵՄՀ ստորաբաժանումների, աշխատակիցների, ինչպես նաև մյուս ներքին և արտաքին շահակիցների կողմից՝ ուղղված ԵՄՀ ռազմավարական նպատակների իրականացմանը:

ՆՊԱՏԱԿ 1.ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Խնդիր 1.1 Ներդնել իրականացվող կրթական ծրագրերի արդիականացման, բարելավման, գնահատման, ինչպես նաև բուհի կողմից նոր կրթական ծրագրերի իրականացման մեխանիզմներ:						
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	ԿԱՏԱՐՈՂՆԵՐ	ԱԿՎԱԿԱՎՈՂ ԱՐՅՈՒՆՔՆԵՐ	ՑՈՒՑԻՉՆԵՐ	Թիրախային ցուցանիշներ	ԺԱՄԿԵՏ ՆԵՐ	ՌԻՄԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ
1. Իրականացվող ՄԿԾ-ների վերլուծություններ՝ հիմքում դնելով ԵՄՀ շահակցների կարիքների հիմ անվրախորքային վերլուծությունները: Վերհանել գործող ՄԿԾ-ների բարելավման ուղիները, ինչպես նաև նոր ՄԿԾ-ների ներդրման հնարավորությունները:	1. ամբիոններ	ա/ Վերանայված ՄԿԾ-ներ, բ/ Ներդրված նոր ՄԿԾ-ներ:	ա/ Կատարված հարցումներին ուսանողների, դասախոսների, շրջանավարտների, գործատուների, մասնագիտական միությունների անդամների, օտարերկրյա գործընկերների և այլ շահագրգիռ անձանց թվաքանակը: բ/ Հնչեցված կարծիքների և կատարված առաջարկների քանակը և որակը:	Մինչև 2017 թ. սեպտեմբեր վերանայված են ԵՄՀ բոլոր կրթական ծրագրերը, նկարագրված են վերջնարդյունք ահեն մոտեցմամբ	Յուրաքան ցյուր տարի	ա/ Լրացուցիչ ռեսուրսների (մարդկային, ֆինանսական) ներգրավման ահներաժեշտություն, բ/ Օրենսդրության, կրթության գերակայություն

<p>2. Ամբիոնների նիստերում, մեթոդխորհրդում քննարկել և գիտական խորհրդում առաջարկություններ կատարել ՄԿԾ-ների արդիականացման, ինչպես նաև նոր ՄԿԾ-ների ներդրման վերաբերյալ:</p>	<p>2. ամբիոնի վարիչներ, մեթոդ-խորհրդի նախագահ:</p>					<p>երի և այլ փոփոխություններ:</p>
--	--	--	--	--	--	-----------------------------------

Խնդիր 1.2. Ներդնել ուսումնառության որակի շարունակական բարելավման մեխանիզմներ՝ նպաստելով ԵՄՀ պրոֆեսորադասախոսական կազմի և ասպիրանտների մասնագիտական և մեթոդական որակավորումների բարձրացմանը, ինչպես նաև ընդլայնելով պրակտիկ գործունեության իրականացման հանարավորությունները:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	ԿԱՏԱՐՈՂՆԵՐ	ԱԿՆԿԱՎՈՂ ԱՐԴՑՈՒՆՔՆԵՐ	ՑՈՒՑԻՉՆԵՐ	Թիրախային ցուցանիշներ	ԺԱՄԿԵՏՆԵՐ	ՌԻՄԿԱՑԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ
<p>1. Իրականացնել ԵՄՀ մասնագիտական, ընդհանրական և մեթոդական վերապատրաստումներ ուղղված դասախոսների որակավորման բարձրացմանը:</p>	<p>ա/ Եվրասիա դասընթացների կենտրոն, բ/ ԵՄՀ ամբիոններ</p>	<p>ա/ Ներդրված կրեդիտային համակարգ ուղղված դասախոսների որակավորման բարձրացմանը: բ/ Որակավորված դասախոսներ:</p>	<p>ա/ ԵՄՀ պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական և մեթոդական վերապատրաստումների նվազագույն կրեդիտային շեմ:</p>	<p>Մինչև 2016 թ. սեպտեմբեր ամբողջությամբ ներդրված է դասախոսների գնահատման գործիքակազմը</p> <p>Մինչև 2017 թ. սեպտեմբեր վերապատրաստված են համալսարանի</p>	<p>2014-2018 թթ.</p>	<p>Ոչ հիմնական դասախոսների արտահոսք կապված վերապատրաստումների համար լրացուցիչ ժամանակի տրամադրման հետ:</p>

				բոլոր դասախոսները		
				Մինչև 2017 թ. սեպտեմբեր ամսի 1-ը վերապատրաստումների հնգամյա պլան		
2. Իրավագիտության ամբիոնին կից գործող իրավաբանական կլինիկայի միջոցով նպաստել ԵՄՀ իրավագիտության ամբիոնի դասախոսների, ասպիրանտների, ուսանողների մասնագիտական որակավորման բարձրացմանը արտաքին շահակիցներին մասնագիտական ծառայությունների մատուցմամբ:	ԵՄՀ իրավագիտության ամբիոնի վարիչ, ամբիոնի դասախոսներ, ուսանողներ:	Դասընթացների շրջանակներում իրավագիտության ամբիոնի դասախոսների, ուսանողների մասնագիտական պրակտիկ գիտելիքների զարգացում:	Վերանայված դասընթացներ՝ համալրված պրակտիկ բաղադրիչով:	Մինչև 2017 թ. սեպտեմբեր վերանայված են ԵՄՀ բոլոր կրթական ծրագրերը, վերջնարդյունքներում առկա են պրակտիկ բաղադրիչներ	Յուրաքանչյուր տարի	Իրավաբանական կլինիկայում բավարարչատվերների առկայության բացակայություն:
3. Տնտեսագիտության ամբիոնին կից ստեղծել բիզնես դպրոց և նրա միջոցով նպաստել ԵՄՀ տնտեսագիտության ամբիոնի դասախոսների, ասպիրանտների, ուսանողների մասնագիտական որակավորման բարձրացմանը արտաքին շահակիցներին մասնագիտական ծառայությունների մատուցմամբ:	ԵՄՀ տնտեսագիտության ամբիոնի վարիչ, ամբիոնի դասախոսներ, ուսանողներ:	Դասընթացների շրջանակներում տնտեսագիտության ամբիոնի դասախոսների, ուսանողների մասնագիտական պրակտիկ գիտելիքների զարգացում:	Վերանայված դասընթացներ՝ համալրված պրակտիկ բաղադրիչով:	Մինչև 2017 թ. սեպտեմբեր վերանայված են ԵՄՀ բոլոր կրթական ծրագրերը, վերջնարդյունքներում առկա են պրակտիկ բաղադրիչներ	Յուրաքանչյուր տարի	Բիզնես դպրոցի միջոցով բավարարչատվերի ստեղծման դժվարություններ:
4. Օտար լեզուների և մանկավարժության ամբիոնի	ա/ ԵՄՀ դասընթացների	ա/ Դասընթացների շրջանակներում օտար լեզվի և մանկավարժության	ա/ Օտար լեզուների և մանկավարժության ուղղություններով վերապատրաստված ԵՄՀ	Մինչև 2018 թ. սեպտեմբեր	Յուրաքանչյուր տարի	ա/ Լրացուցիչ

<p>դասախոսների, ասպիրանտների, ուսանողների շնորհիվ ԵՄՀ դասընթացների կենտրոնում իրականացնել օտար լեզուների իմացության բարձրացմանն ուղղված վերապատրաստումներ՝ դասախոսների ընդհանրական վերապատրաստումների շրջանակներում:</p>	<p>կենտրոն, ք/ ԵՄՀ օտար լեզուների և մանկավարժության ամբիոնի վարիչ, դասախոսներ, ուսանողներ, գ/ ԵՄՀ որակի կենտրոն</p>	<p>ամբիոնի դասախոսների, ուսանողների մասնագիտական պրակտիկ գիտելիքների զարգացում: ք/ ԵՄՀ և այլ բուհերի պրոֆեսորադասախոսական կազմի օտար լեզուների և մանկավարժության ուղղությամբ որակավորման բարձրացում:</p>	<p>դասախոսների թվաքանակ: ք/ Լրացուցիչ ֆինանսական մուտքեր՝ այլ բուհերի դասախոսների վերապատրաստումներից:</p>	<p>օտար լեզուների չտիրապետողք ու լրր դասախոսների համար իրականացված են համապատասխան վերապատրաստումներ</p>	<p>ը կիսամյակ</p>	<p>ռեսուրսների (ֆինանսական, մարդկային) ներգրավման անհրաժեշտություն: ք/ ԵՄՀ օտար լեզուների և մանկավարժության ամբիոնի դասախոսների վերապատրաստման անհրաժեշտություն:</p>
<p>5. Վերապատրաստումներին ներգրավել ԵՄՀ ասպիրանտներին՝ խրախուսելով նրանց համալրումը ԵՄՀ պրոֆեսորադասախոսական կազմին:</p>	<p>ԵՄՀ ամբիոններ</p>	<p>ԵՄՀ ասպիրանտների համալրում պրոֆեսորադասախոսական կազմին:</p>	<p>ԵՄՀ-ում դասավանդող ասպիրանտների թվաքանակ:</p>	<p>Պաշտպանած ԵՄՀ ասպիրանտների նվազագույնը 80%-ն ապահովված է աշխատանքում ԵՄՀ-ում կամ այլ գիտահետազոտական հաստատությունում</p>	<p>Ցուրաքանչյուր տարի</p>	<p>ա/ ԵՄՀ-ում հիմնական դասախոսական աշխատանքի առաջարկի դժվարություններ: ք/ Ցածր աշխատավարձի պատճառով ասպիրանտների հետաքրքրվածության</p>

						սահմանափակություն:
Խնդիր 1.3. Ուսուցման որակի ապահովման և գնահատման ներքին համակարգի բարելավում:						
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	ԿԱՏԱՐՈՂՆԵՐ	ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ	ՑՈՒՑԻՉՆԵՐ	Թիրախային ցուցանիշներ	ԺԱՄԿԵՏՆԵՐ	ՌԻՍԿՍՅԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ
1.ԵՄՀ առաքելության, արժեքների, ռազմավարության, որակի ապահովման քաղաքականության հիման վրա մշակել ԵՄՀ ուսուցման որակի ապահովման և գնահատման ներքին կանոնակարգված քաղաքականություն (միասնական փաստաթղթի տեսքով):	ԵՄՀ որակի կենտրոն	ԵՄՀ ուսուցման որակի ապահովման և գնահատման ներքին քաղաքականություն:	ԵՄՀ ուսուցման որակի ապահովման և գնահատման ներքին քաղաքականության առկայություն:	մշակված համակարգի ամբողջական ներդրում մինչև 2017 թ. սեպտեմբեր	2014 թ. -ին	-
2. Հստակեցնել և ուսուցման որակի ապահովման և գնահատման ներքին քաղաքականությանը համապատասխանեցնել գործընթացի իրականացման համար առկա գործիքները (կարգեր, կանոնակարգեր, ընթացակարգեր և այլն):	ԵՄՀ որակի ապահովման կենտրոն	Վերանայված կարգեր, կանոնակարգեր, ընթացակարգեր և այլ գործիքներ:	Վերանայված կարգերի, կանոնակարգերի, ընթացակարգերի և այլ գործիքների առկայություն:	մշակված փաստաթղթեր և ամբողջությամբ ներդրված են մինչև 2017 թ. սեպտեմբեր	2014 թ. -ին	-
3. Բարելավված գործիքների միջոցով իրականացնել ուսուցման որակի	ա/ԵՄՀ որակի ապահովման կենտրոն:	ԵՄՀ ուսուցման որակի գնահատում:	ԵՄՀ ուսուցման որակի գնահատման իրականացում	Մշակված համակարգի ամբողջական	Յուրաքանչյուր ուսումնական տարվա	Գործիքների կիրառման

<p>ապահովման և գնահատման մոնիտորինգ (օրինակ՝ ուսանողների կողմից դասախոսի գնահատում, պետական քննությունների արդյունքում հանձնաժողովի նախագահի կարծիք, դասընթացների գնահատում և այլն):</p>	<p>բ/ ԵՄՀ ամբիոններ</p>			<p>ներդրում մինչև 2017 թ. սեպտեմբեր</p>	<p>ավարտին</p>	<p>արդյունքում որ արժանահավատ արդյունքի ստացում</p>
--	-------------------------	--	--	---	----------------	---

ՆՊԱՏԱԿ 2. ԳԻՏԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ, ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

<p>Խնդիր 2.1. Նպաստել ԵՄՀ հետազոտական աշխատանքների քանակի ավելացմանը և պրոֆեսորադասախոսական կազմի ակտիվ ներգրավվածությանը այդ ծրագրերում</p>						
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	ԿԱՏԱՐՈՂՆԵՐ	ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԹՈՒՆՔՆԵՐ	ՑՈՒՑԻՉՆԵՐ	Թիրախային ցուցանիշներ	ԺԱՄԿԵՏՆԵՐ	ՌԻՄԿԱՑԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ
<p>Վերանայելի ամսապարանի հետազոտական լոթրի գարգացման տեղությունները:</p>	<p>ա/ ԵՄՀ միջազգային կապերի և հետազոտությունների կենտրոն բ/ Ամբիոններ</p>	<p>ա/ Կիրառական նշանակությամբ հետազոտությունների կատարում և հրատարակում: բ/ Հետազոտության արդյունքների ներդրում կրթական գործընթացում և բուհի կառավարման մեջ: գ/ Գիտահետազոտության արդյունքների հիման վրա քաղաքականության բարելավման</p>	<p>ա/ Հրատարակված հետազոտությունների թվաքանակ: բ/ Բարելավված առարկայական ծրագրեր: գ/ Ներկայացված առաջարկություններ ՀՀ պետական կառույցներին</p>	<p>Մինչև 2018թ. դեկտեմբեր մշակվել և իրականացվել են կիրառական բնույթի հետազոտական ծրագրեր</p>	<p>2014-2018 թթ.</p>	<p>ա/ ԵՄՀ գիտական ավանդույթի, մշակույթի, ռեսուրսների սակավություն: բ/ Ֆինանսական ռեսուրսների սակավություն:</p>

		ուղղությամբ առաջարկների ներկայացում պետական մարմիններին				
Մշակել և իրականացնել հետազոտական ծրագրերի կատարման արդյունավետության գնահատում՝ ղեկավարվելով գիտական հրատարակումներով, դրանց վրակատարված հոդումներով և այլ ցուցանիշներով:	ա/ Որակի ապահովման կենտրոն բ/ ԵՄՀ միջազգային կապերի և հետազոտությունների կենտրոն	Գիտահետազոտական գործունեության արդյունավետության գնահատման ցուցանիշների սանդղակի առկայություն	ա/ գիտահետազոտական գործունեություն գնահատող սանդղակ/ռուբրիկ բ/ գիտական հրատարակումների և դրանց վրանցնարակումների և ի քանակ գ/ ազդեցության գործակցով ամսագրերում հրատարակվող հոդվածների քանակ	Մինչև 2017թ. մայիսմշակվել և ներդրվել է արդյունավետության գնահատման ցուցանիշների սանդղակ	2016-2017թթ.	
